





ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԸ



Գիտության դպրոց «Քիմիայի Մոլ» Science School "Chemistry Mall" (CheM-2024)

- ✓ Անցկացման վայրը, ժամկետները՝ ք. Երևան, 8-10 հունիսի 2026 թ.
- ✓ Մասնակիցների ընդհանուր թիվը՝ 120
- ✓ Օտարերկրյա պետություններից մասնակիցների թիվը՝ 10
- ✓ ՀՀ-ից երիտասարդ (մինչև 35 տարեկան) մասնակիցների թիվը՝ 80

«Քիմիայի Մոլ» (Science School "Chemistry Mall" (CheM-2026)) գիտության դպրոցի նպատակն է երիտասարդ գիտնականների, ասպիրանտների, մագիստրատուրայի և բակալավրի ուսանողների, ինչպես նաև ավագ դպրոցի աշակերտների համար ստեղծել միջավայր՝ նորագույն գիտության հետ շփվելու համար: Միջոցառումը հնարավորություն կընձեռի ՀՀ ապագա գիտնականներին շփվել քիմիայի բնագավառի առաջատար մասնագետների հետ և ծանոթանալ այս ուղղության նորագույն ձեռքբերումների հետ:

Ինչպես նաև արդեն իսկ կայացած ՀՀ գիտնականները հնարավորություն կունենան անձամբ հանդիպել և քննարկել նոր համագործակցությունների հնարավորությունները, որոնք կնպաստեն քիմիայի ոլորտում բարձրորակ, միջազգային մակարդակի հետազոտությունների խթանմանը: Դասախոսություններով կներկայանան ոլորտի առաջատար գիտնականները, որոնց տպավորիչ գիտական արդյունքներն անհերքելի են:

«Քիմիայի Մոլ» (Science School "Chemistry Mall" (CheM-2026)) գիտության դպրոցը հանդիսանում է ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետի և ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ նախաձեռնությունը, որի նպատակն է նոր շունչ հաղորդել երիտասարդ սերնդին: ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետը մեծ ազդեցություն և ներդրում է ունեցել ՀՀ-ում և ոչ միայն քիմիայի բնագավառում

առաջատար մասնագետների պատրաստման և գիտական ուղղությունների զարգացման գործում: ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետի շրջանավարտները սփռված են աշխարհի գրեթե բոլոր ծայրերում, նրանք աշխատում են Միջազգային ճանաչում ունեցող գիտական հիմնարկներում, համալսարաններում և արդյունաբերական կազմակերպություններում:

Իր հերթին ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ հանդիսանում է ՀՀ-ում քիմիական կենտրոնների առաջատարներից մեկը, որտեղ տարիներ շարունակ իրականացվում են բազմատեսակ գիտական հետազոտություններ, որոնց արդյունքում հրապարակվում են հոդվածներ տարբեր վարկանիշային ամսագրերում և պաշտպանվում են թեկնածուական և դոկտորական թեզեր: Կենտրոնում հաճախակի կազմակերպվում են տարատեսակ գիտական միջոցառումներ՝ սեմինարներ, գիտաժողովներ, դասախոսություններ՝ միջազգային մասնագետների մասնակցությամբ:

Կազմակերպիչները բավական հաջող արդյունքներ ունեն ոլորտում: Գրեթե բոլորը հանդիսանում են գիտական թեմաների և խմբերի ղեկավարներ, յուրաքանչյուրն ունի տարեկան մի քանի տպագրություն բարձր վարկանիշ ունեցող միջազգային ամսագրերում: Ավելին, կազմակերպիչները ակտիվ զբաղվում են ոչ միայն գիտական գործունեությամբ, այլև կրթական, և գիտակցում են երիտասարդներին այս տեսակ միջոցառումներով ոգևորելու անհրաժեշտությունը:

Գիտական դպրոցի շրջանակներում կանցկացվեն հեղինակավոր գիտնականների գիտական զեկույցներ, որտեղ կներկայացվեն և կքննարկվեն քիմիայի ոլորտի վերջին նվաճումները և դրանց կիրառման հնարավոր բնագավառները: Միջոցառմանը կմասնակցեն նաև տարբեր ինստիտուտների և համալսարանների քիմիկոսները: Նախատեսվում է նաև «Կլոր սեղան» քննարկումներ երիտասարդ գիտնականների և արտերկրից ժամանած առաջատար մասնագետների մասնակցությամբ: Արդյունքում երիտասարդ գիտնականները և ուսանողները ոչ միայն կծանոթանան առաջատար գիտնականների հետ, այլև կգիտակցեն, թե որ գիտական ուղղություններն են խոստումնալից ժամանակակից քիմիայում, և որոնցով իրենք կցանկանային և պետք է զբաղվեն մոտ ապագայում:

Այս պահին հրավերը ընդունած պլենար դասախոսների ցանկը

Պլենար դասախոսներ	h-index, scopus	
PL1: Vladimir Gevorgyan	88	University of Texas at Dallas, Richardson, TX, USA
PL2: Valentine Ananikov	75	Zelinsky Institute of Organic Chemistry, Moscow, Russia
PL3: Hiroyuki Nakamura	51	Institute of Integrated Research Institute of Science Tokyo
PL4: Igor Alabugin	62	Florida State University Tallahassee, FL, USA
PL5: Andrei Malkov	45	Loughborough University, UK
PL6: Andrei Yudin	52	University of Toronto, Toronto, Canada
PL7: Davit Hayrapetyan	13	Nazarbayev University, Kazakhstan

Ավելի մանրամասն կոնֆերանսի մասին կարող եք տեղեկանալ <https://www.yasu.am/conference/988> կայքից:

Հատկանշական է, որ նման հայտնի գիտնականները համաձայնվել են ժամանել և դասախոսություն կարդալ հիմնականում իրենց հաշվին : Այս տեսակ կապերի ստեղծումն ու ամրապնդումը հնարավոր եղավ մի շարք ՕԴՔԳՏԿ-ի և ԵՊՀ-ի կողմից կազմակերպած միջազգային “Նոր զարգացող միտումները քիմիայում 2023” ([New Emerging Trends in Chemistry 2023](#)) “Նոր զարգացող միտումները քիմիայում 2023” ([New Emerging Trends in Chemistry 2025](#)) գիտաժողովի և «Քիմիայի Մոլ» (Science School "Chemistry Mall" ([CheM-2024](#))) գիտության դպրոցի շնորհիվ: Վստահ ենք, որ այս միջոցառումը էլ ավելի կզարգացնի և կխորացնի կապերը ժամանակակից քիմիայի առաջատար գիտնականների հետ:

ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

Հ/հ	Ա.Ա.Հ.	Գիտական աստիճան, գիտական կոչում	Գիտական կազմակերպություն, քաղաք, երկիր
1.	Արմեն Սուրենի Գալստյան	դոցենտ, ք.գ.թ.	ԵՊՀ, ք. Երևան, ՀՀ
1.	Նարինե Անժելյոյի Դուրգարյան	պրոֆ., ք.գ.դ.	ԵՊՀ, ք. Երևան, ՀՀ
2.	Մկրտչյան Աննա Ֆելիքսի	դոցենտ, ք.գ.թ.	ԵՊՀ, ք. Երևան, ՀՀ
1.	Լիանա Սերգեյի Գաբրիելյան	դոցենտ, ք.գ.թ.	ԵՊՀ, ք. Երևան, ՀՀ
2.	Գոհար Աշոտի Շահինյան	դոցենտ, ք.գ.թ.	ԵՊՀ, ք. Երևան, ՀՀ
3.	Ռոբերտ Մամիկոնի Հակոբյան	ք. գ. թ.	ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ, Երևան, ՀՀ
4.	Արփիե Սաշայի Հարությունյան	ք. գ. թ.	ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ, Երևան, ՀՀ
5.	Աստղիկ Ալեքսանի Շահխատունի	ք. գ. թ.	ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ, Երևան, ՀՀ

Առաջարկներ հովանավորների համար

Գլխավոր գործընկեր

- ✓ ընկերությանը «Գիտության դպրոցի գլխավոր գործընկեր» կարգավիճակ շնորհում
- ✓ ընկերության ներկայացուցչի ողջունի խոսքի հնարավորություն Գիտության դպրոցի բացմանը
- ✓ մեկ բանավոր ելույթ մինչև 30 րոպե տևողությամբ քիմիայի մասնագիտական ոլորտից:
- ✓ Գիտության դպրոցի նախասրահում և/կամ դահլիճներում գովազդային վահանակների տեղադրում
- ✓ ընկերության լոգոյի տեղադրում ծրագրում և Գիտության դպրոցի կայքում
- ✓ 1 էջի գովազդի տեղադրում Գիտության դպրոցի ծրագրում
- ✓ գովազդային նյութերի տեղադրում մասնակցի պայուսակում (ծավալը՝ համաձայնեցված Կազմակերպչի հետ)
- ✓ ընկերության հուշանվերների տեղադրում մասնակցի պայուսակում
- ✓ Գիտության դպրոցին ընկերության մինչև 4 ներկայացուցչի գրանցում
- ✓ Գիտության դպրոցի ընթրիքի մինչև 4 հրավիրատուն

Փաթեթի գինը:
1 500 000 դրամ

Գլխավոր հովանավոր

- ✓ ընկերությանը «Գիտության դպրոցի գլխավոր հովանավորի» կարգավիճակ շնորհում
- ✓ մեկ բանավոր ելույթ մինչև 30 րոպե տևողությամբ քիմիայի մասնագիտական ոլորտից:
- ✓ ընկերության լոգոյի տեղադրում ծրագրում և կայքում
- ✓ գովազդային նյութերի տեղադրում մասնակցի պայուսակում (ծավալը՝ համաձայնեցված Կազմակերպչի հետ)
- ✓ Գիտության դպրոցի նախասրահում և/կամ դահլիճներում գովազդային վահանակների տեղադրում
- ✓ Գիտության դպրոցին ընկերության մինչև 3 ներկայացուցչի գրանցում
- ✓ Գիտության դպրոցի ընթրիքի մինչև 3 հրավիրատուն

Փաթեթի գինը:
1 000 000 դրամ

Հովանավոր


- ✓ ընկերությանը « Գիտության դպրոցի հովանավորի» կարգավիճակ շնորհում
- ✓ ընկերության լոգոյի տեղադրում ծրագրում
- ✓ գովազդային նյութերի տեղադրում մասնակցի պայուսակում (ծավալը՝ համաձայնեցված Կազմակերպչի հետ)
- ✓ Գիտության դպրոցին ընկերության մինչև 2 ներկայացուցչի գրանցում
- ✓ Գիտության դպրոցի ընթրիքի մինչև 2 հրավիրատուն

Փաթեթի գինը:

500 000 դրամ



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԻ



Science School “Chemistry Mall”

CheM-2026

Venue: Yerevan, Armenia

Dates: June 8–10, 2026

Expected participants: 120

International participants: 10

Young researchers from Armenia (under 35): 80

About the Science School

The Science School “Chemistry Mall” (CheM-2026) is an international scientific event designed to create a dynamic platform for interaction between young researchers and leading experts in modern chemistry.

The program will bring together young scientists, PhD, master’s and bachelor’s students, as well as high-school students, providing them with the opportunity to engage directly with internationally recognized researchers and learn about the latest advances in chemical science.

In addition to supporting the development of the next generation of scientists, the event will also provide an important networking platform for established researchers from Armenia, enabling them to meet distinguished international scholars and explore new opportunities for scientific collaboration and joint research initiatives.

The program will feature plenary lectures delivered by internationally renowned scientists, whose groundbreaking contributions have significantly influenced contemporary chemical research.

Organizers

The Science School “Chemistry Mall” (CheM-2026) is organized by:

Faculty of Chemistry, Yerevan State University (YSU)

Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry at Armenian National Academy of Sciences

The Faculty of Chemistry at Yerevan State University has played a pivotal role in the development of chemical science in Armenia. Over decades, it has trained numerous highly qualified specialists who now work in leading universities, research institutes, and industrial organizations around the world.

The Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry at Armenian National Academy of Sciences is one of the leading chemical research centers in Armenia, where diverse scientific investigations are conducted and regularly published in high-impact international journals. The institute actively organizes scientific meetings, seminars, and conferences with participation from international researchers.

The organizing team consists of active researchers and academic leaders, many of whom head scientific research groups and publish regularly in high-ranking international journals. Beyond their research activities, the organizers are strongly committed to science education and the promotion of young talent, recognizing the importance of events such as CheM-2026 in inspiring the next generation of scientists.

Scientific Program

- The Science School program will include:
- Plenary lectures by internationally recognized scientists
- Scientific presentations on the latest developments in chemistry
- Round-table discussions with young researchers and international experts
- Networking opportunities between participants and leading scientists

These activities will allow young researchers and students not only to meet internationally recognized scientists but also to gain insights into the most promising research directions in modern chemistry and potential future career paths.

Confirmed Plenary Lecturers

Vladimir Gevorgyan (h-index 88), University of Texas at Dallas, USA

Valentine Ananikov (h-index 75), Zelinsky Institute of Organic Chemistry, Russia

Hiroyuki Nakamura (h-index 51), Institute of Science Tokyo, Japan

Igor Alabugin (h-index 62), Florida State University, USA

Andrei Malkov (h-index 45), Loughborough University, United Kingdom

Andrei Yudin (h-index 52), University of Toronto, Canada

Davit Hayrapetyan (h-index 13), Nazarbayev University, Kazakhstan

Further information about the event can be found at:

<https://www.ysu.am/conference/988>

It is particularly noteworthy that these distinguished scientists have agreed to participate and deliver lectures largely at their own expense, demonstrating their strong support for scientific cooperation and knowledge exchange.

The development of such international collaborations has been made possible through a series of scientific events previously organized by YSU and the Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry, including the international conferences “[New Emerging Trends in Chemistry 2023](#)”, “[New Emerging Trends in Chemistry 2025](#)”, and the [Science School “Chemistry Mall \(CheM-2024\)](#)”.

We are confident that CheM-2026 will further strengthen international scientific cooperation and foster new partnerships in the field of modern chemistry.

Sponsorship Opportunities

We invite organizations and companies to support the Science School through the following sponsorship packages.

Main Partner

Contribution: 1,500,000 AMD

Benefits include:

- Official recognition as “Main Partner of the Science School”
- Welcome address by a company representative at the opening ceremony
- One invited presentation (up to 30 minutes) in a relevant professional field
- Placement of company logo in the event program and on the official website
- Full-page advertisement in the event program
- Placement of promotional materials and branded items in participant bags
- Advertising banners in the conference venue
- Registration for up to 4 company representatives
- 4 invitations to the official conference dinner

Main Sponsor

Contribution: 1,000,000 AMD

Benefits include:

- Official recognition as “Main Sponsor of the Science School”
- One invited presentation (up to 30 minutes)
- Placement of company logo in the program and on the website
- Distribution of promotional materials in participant bags
- Advertising banners at the conference venue
- Registration for up to 3 company representatives
- 3 invitations to the conference dinner

Sponsor

Contribution: 500,000 AMD

Benefits include:

- Official recognition as “Sponsor of the Science School”
- Placement of company logo in the event program
- Distribution of promotional materials in participant bags
- Registration for up to 2 company representatives
- 2 invitations to the conference dinner